

ԱՐՏԱՍԱՋՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈԻԹԻՒՆՆԵՐ

Պատշ չալգէի «ՄԱՐԻԱՄ ՄԱԳԻԱՂԻՆԱՅԻՆ».

«Մարիամ Մագդաղինացի» դրաման բաղկացած է հինգ գործողութիւնից: Նիւթը առնուած է աւետարանից և ներկայացնում է Քրիստոսի չարչարանքի վերջին շաբաթը, քարոզութիւնները, հրաշքները, չարչարանքն ու վերջին խաչելութիւնը: Գլխաւոր գործող անձերն են՝ Մարիամ Մագդաղինացին ու Յուդա Իսկարիովտացին, ապա Կալիստիա քահանայապետը և Պոնտացի Պիղատոսի եղբօրորդի Ֆլաւիուսը:

Դերակատարները ընդհանրապէս պատմական անձնաւորութիւններ են և ներկայանում են աւետարանի մէջ ստուերագործուած ընաւորութեանց հիմնական գծերով, միայն իհարկէ՝ հեղինակի գրչի տակ աւելի գունաւորուած և աւելի կատարելացրուած են դրանց տիպերը, իսկ մի քանի դէպքեր և իրողութիւններ աւելի ընդլայնուած և իդէալականացրուած են:

Դրաման պարզ է ակզբից մինչև վերջ թէ իւր դէպքերի կապակցութեամբ և թէ իւր ոճով: Յաճախ գործող անձինք խօսում են հին կտակարանի մարգարէների խօսքերով կամ Յիսուսի քարոզութեանց ժամանակ արտասանած բառերով, որով գրուածքը ըէպո ընաւորութիւն է ստանում և ընթերցողի երեւակայութիւնը տաանեակ դարեր յետ է քաշում:

Այս դրամայի մէջ հրէայ ժողովուրդը ներկայանում է իւր ամբողջ ֆանատիկոսութեամբ: Նրա համար իւր հայրենի կրօնից և արտաքին-ծիսական օրէնքներից դուրս ոչ մի սրբութիւն չը կայ: Ինչոր հրէական չէ, նա գարչելի է, ով Իսրայէլի Աստուծուն չէ ճանաչում, նա պիղծ է: Եւ հեղինակը գեղեցիկ կեր-

պով պատկերացնում է այն զգուանքը, որ հրէաները տածում էին դէպի հեթանոս և իշխող հռովմայեցիք: Նրանք ստրկացրել էին հրէայ ժողովրդին և կամենում էին իրանց կարգերն ու օրէնքները տիրապետող դարձնել Հրէաստանում: Բայց հրէայ ժողովուրդը նոյնպիսի զգուանք, գուցէ և աւելի, տածում է նաև դէպի իւր հարազատը, եթէ նա յանդգնել է իսրայէլի Աստրծու ահեղ պատուիրանի սահմանից դուրս ելնել: Հասարակութիւնը այդպիսի անհատին չէ ուզում իւր անդամը ճանաչել, նա ամենքից հալածուած և արհամարուած է և հասարակութեան աչքին երևալու իրաւունք չ'ունի: Ահա այդպիսի մի յանդուգն դրամայի մէջ է ներկայանում Մարիամ Մագդաղինացին:

Այդ կինը յանդգնել է ոտքի տակ տալ մովսիսական 10 պատւիրաններից մէկը. — «Մի չնար». — նա չնացել է, թէ ինչ հանդամանքներից ստիպուած, ֆանատիկ ժողովուրդը այդ չէ ուզում իմանալ. այդ նրան չէ հետաքրքրում. իրողութիւնն այն է, որ Մագդաղինացին պոռնիկ է և համարձակուել է իւր ամուսնուց բաժանուել: Նա դատապարտուած է տանը փակուած կեանք վարել և հրապարակ չ'ելնել, եթէ չէ ուզում քարկոծուել:

Բայց ով էր Մարիամը: Աղքատ գիւղացու զաւակ. ծնողները հարստութեան համար տանհինդ տարեկան, հրաշալի դեղեցկութիւն ունեցող Մարիամին ամուսնացրել էին 55 տարեկան մի ծերունու հետ: Մարիամը նրան սիրել չէր կարող, բայց և այնպէս 3 տարի նրա հետ կենակցեց և տեսնելով՝ որ անհնարին է այլևս սպասել, փախաւ իր ամուսնուց և երուսաղեմ եկաւ, ուր ապրում է իր պառաւ աղախին Ռեխայի հետ:

Սակայն նրա գեղեցկութիւնը դադար չէ տալիս հրէայ երիտասարդներին, նրաք յաճախ որևէ առիթ փնտրելով կամ նոյնիսկ բռնութեամբ «Մագդաղինայի Աստղին» այցելութեան են մտնում, և բաղդաւոր է նա, որին Մարիամը մի բաժակ գինի կը մատուցանէ՝ կամ մի ժպիտ կը փոխանակէ:

Նա սիրում է միայն մէկին, որ համեստ է և իւր պէս վրէժխորութեամբ է լցուած իսրայէլին ստրկացնող հռովմայեցիների դէմ. — դա Յուդա Իսկարիոփոսային է:

Բայց ահա անցնում են իրար վրայ մի քանի շաբաթներ, և Յուդան այլևս չէ երևում:

Մագդաղինացին գիշեր ու ցերեկ քուն չ'ունի և կորցրել է իւր հաւատը դէպի ամբողջ մարդկութիւնը:

Օգտուելով առթից՝ Մարիամի մօտ է մտնում Ֆլաւիուսը, որը Հռոմից բարձր պաշտօնով երուսաղէմ էր ուղարկուած, և

պատմում է, թէ Յուդային տաճարում տեսաւ, որ ստրկաբար խոնարհուեց Գալիլիայից նոր եկած քարողչի առաջ, երբ վերջինս նրա սեղանը տապալեց և դրամները ցրեց:

Մի բոպէ Մարիամը ևս զայրանում է Յուդայի այս վարմունքի համար՝ համարելով այն ստրկահոգութիւն, բայց երբ Յուդան գալիս է և հիացած պատմում, թէ ինչպէս նազովբեցի քարողիչը իւր հայկացքով նրան կաշկանդեց և ստիպեց ամեն ինչ մոռանալով՝ չարունակ իրան հետեւել, Մագդաղինացին վճռում է անպատճառ այդ մարդուն տեսնել:

Բ. գործողութեան մէջ Կայիափա քահանայապետը Ֆլաւիուսի մօտ է եկել համոզելու, որ գալիլիացի քարողիչը փաստակար է, և պէտք է հալածել նրան: «Այդ մարդը եթէ ձեզ համար փաստակար է, ուրեմն նա օգտակար է մեզ համար. չէ որ մեր թշնամիների թշնամին մեր բարեկամն է, ասում է Ֆլաւիուսը. ուրեմն Հոռովմը ինչու պիտի հալածէ նրան. ընդհակառակը՝ նա պիտի նպաստէ»:

Այդ ժամանակ ներս է մտնում Մագդաղինացին, որ եկել է Ֆլաւիուսի տնից հարևան բակը դիտելու, ուր մի ծառի տակ քարողում է Յիսուս:

Կայիափան խօսում է Մարիամի հետ և խոստանում է նրա ընկած անունը բարձրացնել ամբողջ Իսրայէլի աչքում, եթէ նա իր գեղեցկութեամբ կը հրապուրէ և կը զայթակղեցնէ այդ քարողչին և ցոյց կը տայ, որ նա «գառան մորթով մի գայլ է»: Մագդաղինացին մերժում է այս ստոր առաջարկութիւնը և գնում է Յիսուսին լսելու: Ահա այնտեղ ծառի տակ կանգնած է մեծ քարողիչը, իսկ ամբողջ ամեն կողմից չըմպատել է նրան. նրա հէնց առաջին հայկացքը կաշկանդում է Մարիամին, և նա չէ կարողանում իր աչքերը հեռացնել նրանից: Նա չէ բաւականանում այլևս միայն հեռուից դիտելով զոհանալ, այլ մօտ գնալ, որքան կարելի է մօտ, զգալ նրա շունչը և աչքը չը փախցնել նրա տեսողութիւնից մի վայրկեան անգամ: Եւ Մագդաղինացին մտնում է ամբոխի մէջ:

Այս տեսարանը (Ը. տես.), որտեղից սկսւում է և դրամայի հանգույցը, ամենազօրեղ և էֆֆեկտ թողնող պատկերն է դրամայի մէջ: Մինչդեռ մոլեղին ամբոխը քարերը ձեռքին՝ Մագդաղինացու վրայ է յարձակւում, գոչելով՝ «Բարկոճեցէք այդ պոռնրկին, մահու արժանի է դա. այդպէս է պատուիրել մեզ Մովսէսը»—լսւում է զրսից մի ինչ որ խուլ ձայն: «Լուսթիւն, վարդապետը խօսում է», աղաղակում է ամբոխի միջից մէկը. և հասարակութիւնը քար կտրած և ականջ դարձած արձանանում է իր տեղում: Մեռելային լուսթիւն է տիրում բնմի վրայ, իսկ

բնմի խորքից ծանր և հանդիսաւոր կերպով լսուամ են մեծ վարդապետի նշանաւոր խօսքերը. «Ով որ ձեզանից անմեղ է, թող նա նետէ առաջին քարը դրա վրայ»։ Ով որ ձեզանից անմեղ է... ինչ ծանր խօսքեր. որքան խիստ պայման. ով է անմեղ... էլ ով սիրտ կ'անէր քար նետելու այդ կնոջ վրայ. ոչ ոք. գաղան դարձած ամբոխը խոնարհուած է իւր գլուխը՝ վեր բարձրացած բռնուկները բացուած և ցած են իջնում. իսկ վերցրած քարերը ակամայից ձեռքից գետին են ընկնում. — վարագոյրը իջնում է։

Հետեւեալ գործողութիւնը Սիմոնի տունն է ներկայացնում, ուր քարոզում է Յիսուս, և որի առաջ խմբուած է հանդիւն ամբոխ։ Տանտէրը մերժում է ամենքին, ասելով որ իւր տանը տեղ չը կայ. միայն Մագդաղինացուն է յաջողում նարդոսի շիշը ձեռքին Սիմոնի տունը մտնել և իւր խորին շնորհակալութիւնը յայտնել նրան, որին նա իւր կեանքն է պարտական։

Այս գործողութիւնից արդէն նկատուած է այն փոփոխութիւնը, որ մտնում է Յուդայի մէջ, երբ նա Քրիստոսի մէջ իւր ակնկալածը չէ գտնում։

«Նա ասում էր, թէ ես Աստուծոյ թագաւորութիւն պիտի հաստատեմ այս աշխարհի վրայ, ուր խաղաղութիւն և արդարութիւն պիտի իշխէ. ես յոյս ունէի, որ նա կը թօթալի օտարի լուծը մեր վրայից, և մեր երկիրը դարձեալ մերը կը լինի, որ Տէր Աստուած Ինքը Աբրահամի որդոցը ժառանգութիւն է տուել. իսկ այժմ ինչ է ասում նա. «Տուէք կայսերը կայսեր և Աստուծոյն Աստուծոյն Սիրեցէք ձեր թշնամիներին»։ Սիրել թշնամիներին, միթէ կարելի է հռովմայեցիներին սիրել», զարմացած բացազանցում է Յուդան՝ գետին թքելով։ Եւ ատելութեան տրամադրութիւնը դէպի Քրիստոս աստիճանաբար զարգանում է Յուդայի մէջ, մինչև որ մատնութեամբ լրումն է գտնում։

Դ. գործողութիւնը Մագդաղինացու վերածնութեան նրկարագիրն է։ Նա մոռացել է ամեն ինչ և մտածում է միայն այն մեծ քարոզչի համար, որ իւր մէջ այդպիսի փոփոխութիւն մտցրեց։ Նա այլևս ոչ մի աշխարհային սէր չէ ուզում ձանաչել, հետևապէս և Յուդային, մանաւանդ որ սա իւր Փրկչին ատում է։ Գիշեր ու ցերեկ անըուն է մնում և տանը փակուած՝ «Երդ երգոյն» է կարդում ս. Գրքից և միայն նրա համար մտածում։

«Ո՛ր, Ողորմած Աստուած, արդեօք հնարաւոր է, որ նա էլ մի անգամ ինձ համար մտածէ, ինձ հաճար. բայց ես նրա աչքի մի չիւզը չեմ լինի» — ասում է նա։

Յանկարծ ներս է մտնում Ֆլաւիոսը և յայտնում է, որ մոլեգին ամբոխը վճռել է վարդապետին խաչել, և իւր հօրեղորը ջանքերը զուր անցան նրան աղատելու։

«Բայց դեռ ամեն ինչ վերջացած չէ, աւելացնում է նա. ես կարող եմ նրան փրկել, եթէ միայն դու ինձ սիրես: Նրա խաչուելուց առաջ կէս գիշերին ես քեզ մօտ կը մտնեմ վերջնական պատասխան ուզելու, լաւ մտածիր» — ասում է Ֆլաւիոսը և դուրս գնում:

Ահա դրամատիկական մի վայրկեան, ուր «լինել, թէ չը լինելու» հարց է ծագում, և ուր դրամայի հանգույցը իւր լուծումն է պահանջում:

Ահա բախում են դուռը. բայց Մարիամը չէ կարողանում չարժուել իւր տեղից: Հարուածները սաստկանում են:

«Աստուած իմ, եթէ այդ Քո կամքն է, տուր ինձ զօրութիւն ի կատար ածելու: Ծնկներ, ինչու էք դողում դուք, չէ որ մինչև դուռը ճանապարհը շատ կարճ է—10 քայլ և ապա նիզը բանալ. օ, Աստուած իմ, ես շատ գիշերներ եմ այդպէս արել, երբ դրսից ինձ ծանօթ մի ձայն էր լսում, իսկ այսօր. կարծէք մի բռունցք ինձ վայր է տապալում (դուռը կրկին բախում են). համբերութիւն, միայն մի փոքր համբերութիւն. դեռ շատ ժամանակ կայ մինչև կէս գիշեր: Բայց վերջապէս ես պիտի քակեմ ինձ կաշկանդող կապանքները. դանդաղելու ժամանակ չէ (արեացած քայլում է մինչև դուռը). մի խորխորատ, լնչպէս անցընեմ նրա վրայից—ահա և ինքը այնտեղ կանգնած է. նրա աչքերը, նրանք թափանցում են մինչև իմ սրտի խորքը, նրա ձայնը. «Մարիամ, ինչ ես ուզում անել դու. մի՞թէ դու հոգով և մարմնով վերածնունդ չես. և այն, ինչ որ արեուած է իմ շնչով, մի՞թէ պէտք է նորից պղծուի իմ պատճառով. հեռու այդ խորխորատից»: Եւ Մագդաղինացու քայլերը ուղղւում են դէպի յետ:

Դրամատիկական այս զօրեղ վայրկեանից յետոյ, երբ արդէն լիովին արապայտւում է հեղինակի էական գաղափարը—բարոյականութեան յաղթանակը—կարելի էր արդէն դրաման վերջացած համարել, բայց Պաուլ Հայդէն տալիս է մեզ մի գործողութիւն ևս, ուր Փրկչին Գողգոթա են տանում և խաչում: Յուդան խճահարւում է և ինքնիրան կախելու է գնում, իսկ Մագդաղինացին սգի և յուսահատութեան մէջ պատրաստւում է անապատ քաշուելու, երբ Սիմոնը յայտնում է նրան, որ Յիսուս խոստացել է 3 օր յետոյ յարութիւն առնել և իւրայիններին երևալ: Մարիամը գնում է Սիմոնի տունը և սպասում այդ օրուն: